ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՆԻԿ ՍԱՐԻԲԵԿԻ ԳԱԲՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ N55/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 819,42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վանիկ Սարիբեկի Գաբոյանին սեփականության իրավունքով պատկանող)Գյումրի քաղաքի Խրիմյան հայրիկ փողոց N55/1 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 819,42 (ութ հարյուր տասնինը ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական շինություն:

Քաղաքացի Վանիկ Սարիբեկի Գաբոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 24.01.2023 թվականի N 1040 թվագրմամբ) նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22, << Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Վանիկ Սարիբեկի Գաբոյանին սեփականության իրավունքով պատկանող)Գյումրի քաղաքի Խրիմյան հայրիկ փողոց N55/1 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 819,42(ութ հարյուր տասնինը ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական շինությունը ճանաչել օրինական տեղական բյուջե ենթակա է գանձման 4465839(չորս միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր երեսունինը) << դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վանիկ Սարիբեկի Գաբոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> ապրիլի 2023 թվականի N 1000-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Հովհաննեսի Բադալյանի 2023 թվականի ապրիլի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Հովհաննեսի Բադալյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի ապրիլի 25-ից:

2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2023 թվականի ապրիլի 25-ից 28-ը ներառյալ:

3.Ամենամյա լրացուցիչ արձակուրդի ընթացքում Կարեն Հովհաննեսի Բադալյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ Մենուա Սերյոժայի Մկրտչյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հովհաննեսի Բադալյանին և Մենուա Սերյոժայի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2023 **թվականի** N 999-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԻԱՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 18Բ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դիանա Տիգրանյանի (ՀՎՀՀ՝ 05552244, գրանցման ամսաթիվը՝ 26.02.2021 թ.) 2023 թվականի ապրիլի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 12-ին 6385 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դիանա Տիգրանյանին Գյումրի քաղաքի Շիրակացի 18բ հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիանա Տիգրանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

X _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլ 2023 **թվականի** N 998-Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի ապրիլի 11-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6308 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Անկախության հր. հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 15- ից մինչև 2023 թվականի մայիսի 15-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

19.04.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2023 թվականի № 997-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ, 10/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 60.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի փողոց, 10/3 հասցեի հողամասի հարևանությամբ գտնվող 60.01 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ, 10/7:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի N 996 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 44.32 քառակուսի մետր արտաքին 34.85 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 76-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 44.32 քառակուսի մետր արտաքին 34.85 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 76-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «հասարակական» բառից հետո լրացնել «(գրասենյակ)» բառը:

12.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի N995-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 291.89 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 291.89 քառակուսի մետր արտաքին 227.19 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 77-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 291.89 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 291.89 քառակուսի մետր արտաքին 227.19 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 77-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «հասարակական» բառից հետո լրացնել «(գրասենյակ)» բառը:

12.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի N 994Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ N 25/3 ՀԱՍՑԵԻ 59.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոցի N 25/3 հասցեի 59.28 (հիսունինն ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոցի N 25/3 հասցեի 59.28 (հիսունինն ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

12.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2023 թվականի N 993-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 706-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղու N 2/16 հասցեի 856.93 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղու N 2/16 հասցեի 856.93 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 706-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «856.93 (ութ հարյուր հիսունվեց ամբողջ իննսուներեք հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «721.9 (յոթ հարյուր քսանմեկ ամբողջ ինը տասնորդական)» թվով և բառերով:

12.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի N 992-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ ՏԱՍԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի թվով տասը մանկապարտեզների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ
4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

18.04.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլ 2023 **թվականի** N 991-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ ՏԱՍԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի թվով տասը մանկապարտեզների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հենրիկ Գասպարյան - Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հրաչ Մելքոնյան – «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.04.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի N 990 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության սեղանի թենիսի պատանիների 2023 թվականի ապրիլի 21–24-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով սեղանի թենիսի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 18-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության սեղանի թենիսի պատանիների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 21–24-ը քաղաք Երևան գործուղել թվով 10 (տաս) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2023 **թվականի** N 989-Ա

ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԿԱՊԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով աթլետիկայի Կապանի պատանեկան, հանրապետական 2023 թվականի ապրիլի 22-24-ը Կապան քաղաքում կայանալիք բաց առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով աթլետիկայի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 18-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Աթլետիկայի Կապանի պատանեկան, հանրապետական բաց առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 22-24-ը քաղաք Կապան գործուղել թվով 15 (տասնհինգ) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2023 **թվականի** N 988-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՈԿՈՒՇԻՆԿԱՅ ԿԱՐԱՏԵԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության կիոկուշինկայ կարատեի 2023 թվականի ապրիլի 22-23-ը Երևան քաղաքում կայանալիք գավաթի առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով կիոկուշինկայ կարատեի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 18–ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կիոկուշինկայ կարատեի գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 22-23-ը քաղաք Երևան գործուղել թվով 17 մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի № 987-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 2/14 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ Ը (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0412-0009) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված №6710 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԿԱՐԵՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված բաժանման սխեմանները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 175699.9 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 2/14:

2) 20000.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 2/31:

3) 20000.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 2/32:

18.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2023 թվականի № 986-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ ՓՈՂՈՑ, 5 ԵՎ Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ ՓՈՂՈՑ, 5/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Մանվել Ջանոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №6717 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ռ. Մելիքյան փողոց, 5 (վկայական № 24102012-08-0280) և Ռ. Մելիքյան փողոց, 5/1 (վկայական № 17042023-08-0016) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ ՓՈՂՈՑ, 5:

18.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի № 985-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 66 ՇԵՆՔ, 6 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 06-ի №879-Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց, 66 շենք, 6 հասցեագրությամբ հաշվառած 24.80 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 35.3 քառակուսի մետր մակերեսով հողամասին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 85/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2023 թվականի № 986-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 61.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 61.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի №685–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Բուլվարային փողոց, 2-րդ նրբանցքի հարևանությամբ գտնվող 61.71 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 61.71 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 5/1:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի № 983-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 147.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1232-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի հարևանությամբ գտնվող 147.9 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1232-0001) տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 7/1:

17.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» ապրիլի 2023 **թվականի** N 982-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10 -Ի N 241 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Լուիզա Մովսիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մարտի 27-ին N 5094 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2001 թվականի մայիսի 10-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ.Լուիզա Մովսիսյանի կողմից տեղադրված կրպակի փաստացի զբաղեցրած հողամասը վարձակալության տրամադրելու մասին» N 241 որոշումը:
2. Լուծել հողը վարձակալության տրամադրելու վերաբերյալ 2001 թվականի մայիսի 22-ի (գրանցված գրանցամատյանում N 2264) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ 2001 թվականի մայիսի 22-ի N 0232997 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լուիզա Մովսիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 981-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 63/7 ՀԱՍՑԵԻ 56,16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց N 63/7 հասցեի 56,16 (հիսունվեց ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ստացել է պետական գրանցում (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 071062013-08-0013), որտեղ հողամասի գործառնական նշանակությունը գրված է ընդհանուր օգտագործման հողեր, իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի համաձայն հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց N 63/7 հասցեի 56,16 (հիսունվեց ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

17.04.2023

Ղ.Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի № 980.Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱՐԱՏԻ ՓՈՂՈՑ, 10Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Ոսկանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 6451 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Քաղաքացի Լևոն Ոսկանյանին պատկանող Գյումրի քաղաք, Մարատի փողոց, 10ա հասցեագրությամբ բնակելի տունը վերահասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄԱՐԱՏԻ ՓՈՂՈՑ, 10/3:

17.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի № 979-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ, 5Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0185-0006) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Հովհաննիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №6434 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Կնունյանց փողոց, 5ա հասցեագրությամբ բնակելի տունը (կադաստրային ծածկագիր 08-001-0185-0006) վերահասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ, 5:

17.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> ապրիլի 2023 թվականի N 978-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Հովհաննեսի Բադալյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հովհաննեսի Բադալյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 977-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԻ ՍՈՍԵԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 11 ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ԼԵՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԹԱՆՅԱՆԻ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԹԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի ապրիլի 14-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Տաթևիկ Սամվելի Գրիգորյանը (անձնագիր՝ BA2402038, տրված՝ 22.07.2015 թվականին 012-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 18.03.2010 թվականին ծնված Լեռնիկ Հովհաննեսի Աթանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060468) և 01.03.2014 թվականին ծնված Տիգրան Հովհաննեսի Աթանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №315589) Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախ գյուղի Սոսեի 3-րդ փողոց 11 հողամասի մասնաբաժինները:

Երեխաների հայրը՝ Հովհաննես Լեռնիկի Աթանյանը մահացել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին (հիմք՝ մահվան վկայական ԱԲ №231941):

Վերոնշյալ հասցեի հողամասի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Լեռնիկ Հովհաննեսի Աթանյանը և Տիգրան Հովհաննեսի Աթանյանը (հիմք՝ 20.01.2023 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20012023-07-0154):

Նիստին ներկա գտնվող երեխաների մայրը՝ Տաթևիկ Սամվելի Գրիգորյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխաները՝ Լեռնիկ Հովհաննեսի Աթանյանը և Տիգրան Հովհաննեսի Աթանյանը ժառանգ են հանդիսանում ՀՀ Երևան քաղաքի Մայակ թաղամասի թիվ 77/7/յոթանասուն յոթ կոտորակ յոթ/ հասցեում գտնվող բնակելի տան 2/3-րդ և Գյումրի քաղաքի Երկ.Գծի շենք 9/ինը/, թիվ 2/երկու/ հասցեում գտնվող բնակարանի 2/6-րդ մասերի (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր, տրված՝ 13.06.2016 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Հ.Ֆենդյանի կողմից գրանցված է սեղանամատյանում թիվ 5555 ժառանգական գործ թիվ 229):

Երեխաների մայրը՝ Տաթևիկ Սամվելի Գրիգորյանը հայտնեց նաև, որ հողամասի վաճառքից հետո ձեռք են բերելու նոր բնակարան:

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Լեռնիկ Հովհաննեսի Աթանյանը և Տիգրան Հովհաննեսի Աթանյանը հայտնեցին, որ համաձայն են վաճառելու հողամասի իրենց մասնաբաժինները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Տաթևիկ Սամվելի Գրիգորյանի 2023 թվականի ապրիլի 14-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 6616 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 17-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Տաթևիկ Սամվելի Գրիգորյանին (անձնագիր՝ ВА2402038) վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 18.03.2010 թվականին ծնված Լեոնիկ Հովհաննեսի Աթանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060468) և 01.03.2014 թվականին ծնված Տիգրան Հովհաննեսի Աթանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №315589) Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախ գյուղի Սոսեի 3-րդ փողոց 11 հողամասի մասնաբաժինները, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տաթևիկ Սամվելի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 976-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ N151 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 145.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 10.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N151 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված է 145.27(հարյուր քառասունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ և օրինական հողամասին կից, ավել օգտագործվում է 10.6 (տասն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանի լիազորված անձ Աշոտի Մարտիրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1 կետի և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20237CVRCS ծածկագիրը, քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանի լիազորված անձ Աշոտի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N4549 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանի (ծնված 1939 թվականի նոյեմբերի 05-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N151 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 10.6 (տասն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N151 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 145.27(հարյուր քառասունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Աշոտի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 975-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 1026.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 295.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (251.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Փանյան փողոցի հարևանությամբ, 1026.4 (հազար քսանվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 295.3(երկու հարյուր իննսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին (251.01(երկու հարյուր հիսունմեկ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Գևորգ Վարոսյանը և Կատյա Վարոսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023KRTJTP ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Փանյան փողոցի հարևանությամբ, 1026.4 (հազար քսանվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 295.3(երկու հարյուր իննսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին (251.01(երկու հարյուր հիսունմեկ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Գևորգ Վարոսյանին և Կատյա Վարոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

17.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2023 **թվականի** N 974-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 3-րդ շարք № 39 տան հարևանությամբ գտնվող 93.02 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 69.29 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Արմենուհի Հենրիկի Ամիրյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 198-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 3-րդ շարք № 39 տան հարևանությամբ գտնվող 93.02 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 69.29 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Արմենուհի Հենրիկի Ամիրյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին >> N 198-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023JTYFYB ծածկագիրը>> բառերը և թիվը:

17.04.2023

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 **թվականի** N 973.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 667-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի հարևանությամբ գտնվող 73.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 73.4 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Պավլիկ Գևորգյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 667-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի հարևանությամբ գտնվող 73.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 73.4 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Պավլիկ Գևորգյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 667-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023DHSUDK ծածկագիրը>> բառերը և թիվը:

17.04.2023

Ք

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» ապրիլի 2023 թվականի N 972-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 813-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի N 2807-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի <<Քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Օդանավակայան 3-րդ թաղամաս N 10/5 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 95,07 քառակուսի մետր արտաքին (81,02 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին>> N 2807-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05/04/2023 թվականի N Կ-05042023-08-0047 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի <<Քաղաքացի Լուսինե Անուշավանի Անդրասյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Օդանավակայան 3-րդ թաղամաս N 10/5 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 95,07 քառակուսի մետր արտաքին (81,02 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին>> N 2807-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<81,02(ութսունմեկ ամբողջ երկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<81,2(ութսունմեկ ամբողջ երկու տասնորդական)>> թվով և բառերով.
   2) նախաբանում <<մասերով>> բառից հետո լրացնել <<և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20234NE7FT ծածկագիր>> բառերը և թիվը:
2. Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի N 813-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

17.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 971-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30 -Ի N 807-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Ստյոպա Վոլոդյայի Պողոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 21 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 143,32 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 86,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 807-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով : Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Ստյոպա Վոլոդյայի Պողոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 21 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 143,32 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 86,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 807-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<143,32 (մեկ հարյուր քառասուներեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<84,46 (ութսունչորս ամբողջ քառասունվեց հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) նախաբանում <<իրավունք>> բառից հետո լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023JYMWW8 և 2023NGEYF ծածկագրեր>> բառերը և թվերը:

17.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2023 թվականի N 970-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ԼԵՆԶԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ N 72 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 95,49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 10,62 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 95,49 (իննսունհինգ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 10,62 (տաս ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով (և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. 1 կետի հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվ հունվարի 27-ին N 1320 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանի (ծնված 22.021963թ.) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 10,62 (տաս ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական)) հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 95,49 (իննսունհինգ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ ճանաչել օրինական :

3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարինե Լենզերի Գրիգորյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2023 **թվականի** N 969-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՏԱՐՈՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 31/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Տարոն Առաքելյանի 2023 թվականի ապրիլի 07-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6303 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել Ա/Ձ Տարոն Առաքելյանին Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան 31/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 01- ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Տարոն Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2023 թվականի N 968Ա

<<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍՊԸ-ի 2023 թվականի ապրիլի 07-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6305 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Գորկու փ. հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 18 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 13- ից մինչև 2023 թվականի մայիսի 13-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<ԻմիջՄ.Գ.>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2023 **թվականի** N 967-Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի ապրիլի 11-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6310 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Վարդանանց հր., Բագրատունյաց հր. հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) ավտոբուսային կանգառներին գովազդային պաստառներ ընդհանուր 28 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 01-ից մինչև 2023 թվականի մայիսի 01-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» ապրիլի 2023 **թվականի** N 966-Ա

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2023 թվականի ապրիլի 01-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6307 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 4.32 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 01- ից մինչև 2023 թվականի մայիսի 01-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> ապրիլի 2023 թվականի N 965 -Ա

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի ապրիլի 13-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.<<Գյումրու քաղաքային ճանապարհներ>> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն, Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետների (այսուհետ՝ փորձագետներ) նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ համաձայն հավելվածի:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական Բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձագետներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի -ի N -Ա որոշման

Հ/Հ	Պաշտոնը	Ազգանուն, անուն, հայրանուն	Պարգևատրման չափը՝ ըստ պաշտոնային դրույքաչափի
1	Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ	Ալթունյան Վարդան Մակեդոնի	70%
2	<<Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականցվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ	Կարապետյան Վարդան Լյովայի	70%
3	<<Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականցվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ	Գալստյան Աշոտ Բեժանի	70%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 14 >> ապրիլի 2023 թվականի N 963- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆ ՅՈՒՐԻԿ ՄԻՇԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանի 2023 թվականի ապրիլի 13-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Յուրիկ Միշայի Ալեքսանյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Յուրիկ Միշայի Ալեքսանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2023 թվականի N 964 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, « Համայնքային ծառայության մասին » օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի « բ» կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իրենց ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների (այսուհետ՝ համայնքային ծառայողներ) նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ համաձայն հավելվածի:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայողներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 17-ի N 964-Ա որոշման

Հ/Հ	Պաշտոնը	Ազգանուն,անուն,հայրանուն	Պարգևատրման չափը՝ըստ ամսական պաշտոնային դրույքաչափի
1	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ	Մկրտչյան Մենուա Սերյոժայի	100%
2	Համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի ժ/պ	Գրիգորյան Գևորգ Սամվելի	100%
3	Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ	Ջանոյան Սուրեն Սեպուհի	100%
4	Բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժ/պ	Հակոբյան Շուռիկ Հայկի	100%
5	Կրթության բաժնի պետի ժ/պ	Ալեքսանյան Շողիկ Վիկտորի	100%
6	Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ	Ղազարյան Միխակ Հայկազի	100%
7	Քարտուղարության բաժնի պետ	Մեքինյան Աննա Հրաչիկի	100%
8	Անձնակազմի կառավարման բաժնի պետ	Վարդևանյան Սյուզաննա Սուրենի	100%
9	Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ	Թովմասյան Լիլիթ Արագածի	100%
10	Տրանսպորտի բաժնի պետի ժ/պ	Ղազարյան Գեորգի Նիկոլայի	100%
11	Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժ/պ	Էլբակյան Նազելի Ջիրվանիի	100%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> ապրիլի 2023 թվականի N 962-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆ ՆԱՐԵԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԵԳԶԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանի 2023 թվականի ապրիլի 13-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Նարեկ Հովհաննեսի Բեգզադյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարեկ Հովհաննեսի Բեգզադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» ապրիլի 2023 թվականի N 961 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իրենց աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ համաձայն հավելվածի:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 14-ի N 96/-Ա որոշման

Հ/Հ	Պաշտոնը	Ազգանուն,անուն,հայրանուն	Պարգևատրման չափը՝ըստ ամսական պաշտոնային դրույքաչափի
1	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	Առաքելյան Սոնա Սամվելի	100%
2	Համայնքի ղեկավարի խորհրդական	Մարգարյան Ալբերտ Բելյասի	100%
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	Ջիլավյան Լենա Վաղինակի	100%
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	Անդրիասյան Ռոբերտ Մկրտիչի	100%
5	Համայնքի ղեկավարի օգնական	Շաբոյան Արամ Մարտունիկի	100%
6	Համայնքի ղեկավարի օգնական	Եգորյան Ռոբերտ Աշոտի	100%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2023 թվականի N 1040-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ «ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՂԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Շողիկ Արամայիսի Մելքոնյանի 2023 թվականի ապրիլի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի «Մհեր Մկրտչյանի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շողիկ Արամայիսի Մելքոնյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2023 թվականի մայիսի 02-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 աշխատանքային օր՝ 2023 թվականի մայիսի 02-ից 30-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Շողիկ Արամայիսի Մելքոնյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության էքսկուրսավար Ալեքսանդր Լևոնի Այվազյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շողիկ Արամայիսի Մելքոնյանին և Ալեքսանդր Լևոնի Այվազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2023 թվականի N 1039-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՎԱԼԵՐԻԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Կարեն Վալերիի Բարսեղյանի 2023 թվականի ապրիլի 21-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Վալերիի Բարսեղյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2023 թվականի մայիսի 02-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 աշխատանքային օր՝ 2023 թվականի մայիսի 02-ից 30-ը ներառյալ:

3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Կարեն Վալերիի Բարսեղյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ֆոնդապահ Անահիտ Հրաչի Փահլևանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Վալերիի Բարսեղյանին և Անահիտ Հրաչի Փահլևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.04.2023

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» «ապրիլի» 2023 թվական N 1038-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 751 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Սերգո Պետրովի Ավետիսյանի ներկայացուցիչ՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանը (անձնագիր՝ AP0505308, տրված՝ 16.07.2016 թ., 064 կողմից) Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 751 որոշման մեջ փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման, որոշում եմ մասի 17–րդ կետի 2–րդ ենթակետում՝ «Ավետիսյան Սերգո Պետրոսի» անվանման մեջ հայրանունը՝ «Պետրով»–ի փոխարեն գրվել է «Պետրոսի» (հիմք՝ ամուսնության վկայական ԱԲ № 223185, տրված 11.06.2018թ., Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանի 2023 թվականի ապրիլի 18-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 6989 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ N 751 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 17–րդ կետի 2-րդ ենթակետում՝ «Ավետիսյան Սերգո Պետրոսի» անվանման մեջ՝ «Պետրոսի» բառը փոխարինել «Պետրովի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Իրինա Արամայիսի Եղիազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2023 թվականի N 1037-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ 216,03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 19-ին կազմակերպվել է Խ.Կոշտոյան փողոց N 18/14 հասցեով (ծածկագիր 08-001-0441-0035) 216,03 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Տիգրան Բյուզանդի Փանոսյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2215000 (երկու միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 22):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Խ.Կոշտոյան փողոց N 18/14 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 216,03 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0441-0035) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Տիգրան Բյուզանդի Փանոսյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի է Տիգրան Բյուզանդի Փանոսյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Տիգրան Բյուզանդի Փանոսյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Տիգրան Բյուզանդի Փանոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2023 **թվականի** N 1036.Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԱՆ ԲԱԴՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանի (ՀՎՀՀ՝ 57245548, գրանցման ամսաթիվը՝ 04.05.2006) թ.2023 թվականի ապրիլի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 19-ին 4072 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 7/1 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հանրային ծառայության համարանիշ 05511159

Հանրային ծառայության համարանիշ 05511159

Հանրային ծառայության համարանիշ 05511159

Էլեկտրոնային ստորագրություն

Ք. Գյումրի

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2023 թվականի N 1035-Ա

<<ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐԻ» ԱՆՎԱՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆՆՇԱՆ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23.1-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «15» մարտի 2023 թվականի № 56-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Արմենիա վայն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահագն Մկրտչյանի (ՀՎՀՀ՝ 02588804, գրանցման ամսաթիվը՝ 26.03.2008 թ.) 2023 թվականի ապրիլի 6-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 11-ին 6301 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Արմենիա վայն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահագն Մկրտչյանին օգտագործել «Գյումրի» անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում;
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Արմենիա վայն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահագն Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Կ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» մարտի 2023 թվականի №1034-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 19.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի հարևանությամբ գտնվող 19.84 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1324-0001) տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ, 1/8:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մարտի 2023 թվականի N 1033-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 28-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11 -Ի N 373-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 13-ի <<Քաղաքացի Սեդա Ստեփանի Չախմախչյանին պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 254 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 50,81 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն, ինքնակամ բացված 6(վեց) պատուհանը և 4 (չորս) դուռը և ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը և 4 (չորս) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 89,4 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 373-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 03/03/2023 թվականի N Կ-03032023-08-0204 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 11-ի <<Քաղաքացի Սեդա Ստեփանի Չախմախչյանին պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 254 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 50,81 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն, ինքնակամ բացված 6(վեց) պատուհանը և 4 (չորս) դուռը և ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը և 4 (չորս) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 89,4 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 373-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<89,4(ութսունինն ամբողջ չորս տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<93,0(իննսուներեք ամբողջ)>> թվով և բառերով.

2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<ինքնակամ փակված 4 (չորս) դռան>> թիվը և բառերը փոխարինել <<6 (վեց) դուռ>> թվով և բառերով.

3) որոշման 2-րդ կետում <<31500(երեսունմեկ հազար հինգ հարյուր)>> թիվը և բառերը փոխարինել <<35700(երեսունհինգ հազար յոթ հարյուր) թվով և բառերով.

4) նախաբանում <<դ) ենթակետի>> բառից հետո լրացնել <<հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվաանի դեկտեմերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի>> թվերը և բառերը.

5) վերնագրում <<կարգավիճակի>>բառից հետո լրացնել <<51,74 (հիսունմեկ ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով կառուցապատ հողամասի գործառնական նշանակությունը հասարակականից խառը կառուցապատման փոխելու մասին>> թվերը և բառերը.

6) որոշումը լրացնել նոր <<5-րդ>> կետով հետևյալ բովանդակությամբ.

<<5. Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N254 հասցեի 51,74 (հիսունմեկ ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով կառուցապատ հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել խառը կառուցապատման գործառնական նշանակության:>>:

2. Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 13-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 19-ի N347-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2020 թվականի փետրվարի 11-ի N 373-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> N 28-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

21.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2023 թվականի N 1032-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ N 43 ՀԱՍՑԵԻ 85.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի N 43 հասցեի 85.15 (ութսունհինգ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված հողամասը պետական գրանցման ներկայացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի N 43 հասցեի 85.15 (ութսունհինգ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

18.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մարտի 2023 թվականի N 1031.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 698-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ 15864.96 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 2402.02 քառակուսի մետր ներքին մակերեսով հիմքերը, 13.5 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 11.83 քառակուսի մետր մակերեսով շվաքարանն օրինական ճանաչելու եվ համայնքային սեփականություն համարելու մասին» N 698-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ 15864.96 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 2402.02 քառակուսի մետր ներքին մակերեսով հիմքերը, 13.5 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 11.83 քառակուսի մետր մակերեսով շվաքարանն օրինական ճանաչելու եվ համայնքային սեփականություն համարելու մասին» N 698-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
2. Նախաբանում «շվաքարան» բառից հետո լրացնել «որոնք Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված են 2023CX2UJ7 ծածկագրով» թիվը և բառերը:

21.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 21 >> ապրիլի 2023 թվականի N 1030-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՄԵԼՍԻԿԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀՏՋ ծրագրի համակարգող Ժիրայր Էդիլյանի, << Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման>> ծրագրի ՄԱԶԾ տարածաշրջանային ղեկավար Թինա Սթոունի գրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանին գործուղել Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսել՝ ՄԱԶԾ գրասենյակ՝ Եվրոպական Միության և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի համատեղ նախաձեռնության՝ << Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման >> ծրագրի շրջանակում կայանալիք << Պորտֆելային մոտեցման իրականացման շուրջ տարածաշրջանային փորձի իմաստավորում>> խորագրով միջոցառմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ժամկետը՝ 4 (չորս) օր՝ 2023 թվականի ապրիլի 26-ից 29-ը ներառյալ:

3.Գործուղման ընթացքում Գյումրի համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանին:

4. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Ռուդիկի Պապիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2023 թվականի N 1029Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՇՈՂԻԿ ՎԻԿՏՈՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով և հիմք ընդունելով Շողիկ Վիկտորի Ալեքսանյանի 2023 թվականի ապրիլի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Շողիկ Վիկտորի Ալեքսանյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի ապրիլի 25-ից:

2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2023 թվականի ապրիլի 25-ից 28-ը ներառյալ:

3.Ամենամյա լրացուցիչ արձակուրդի ընթացքում Շողիկ Վիկտորի Ալեքսանյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Մխիթարի Սահակյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շողիկ Վիկտորի Ալեքսանյանին և Աննա Մխիթարի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 21 >> ապրիլի 2023 թվականի N 1028 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ԱՐԱԳԱԾԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163–րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլիթ Արագածի Թովմասյանի 2023 թվականի ապրիլի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի ապրիլի 25-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի ապրիլի 25-ից մինչև 2023 թվականի մայիսի 10-ը ներառյալ:
3.Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լիլիթ Արագածի Թովմասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Էդգար Գագիկի Մարտիրոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արագածի Թովմասյանին և Էդգար Գագիկի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.04.2023

Կ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1027Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված պատանիների 2023 թվականի ապրիլի 26–ին Երևան քաղաքում կայանալիք առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված պատանիների առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 26–ին քաղաք Երևան գործուղել թվով 12 (տասներկու) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1026 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված աղջիկների 2023 թվականի ապրիլի 26–ին Երևան քաղաքում կայանալիք առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված աղջիկների առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 26–ին քաղաք Երևան գործուղել թվով 12 (տասներկու) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1025-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողի մեծահասակների 2023 թվականի ապրիլի 27–29-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով լողի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության լողի մեծահասակների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 27–29-ը քաղաք Երևան գործուղել թվով 10 (տաս) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1024Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2023 թվականի ապրիլի 25-30-ը Երևան քաղաքում կայանալիք բարձրագույն խմբի 1-ին փուլի մրցումներին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի բարձրագույն խմբի 1-ին փուլի մրցումներին մասնակցելու համար 2023 թվականի ապրիլի 25-30-ը քաղաք Երևան գործուղել թվով 14 (տասնչորս) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի N 1023-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
բ.Սերգեյ Մուրադյան -Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի պարտականությունները կատարող,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի N 1022-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան - Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,
4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,
5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի № 1021-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 117/7 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 19.13 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Երևանյան խճուղի, 117/7 հասցեի շինության հարևանությամբ գտնվող 19.13 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1171-0005) տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 117/9:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի №1020-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի №417-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 22-ի «Գյումրի ք. Բուլվարային փողոցի հարևանությամբ գտնվող 17980.0 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001- 0213-0005, 0008) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №417-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ «17980.0» թիվը փոխարինել «14613.8» թվով:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի № 1019-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 1/1 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0345-0024) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անժիկ Մովսիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №6777 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Վլադիմիր Գրիգորյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 770.2 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 1/1:
2) 781.9 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 1/2:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի № 1018-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 57.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 111.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 07-ի №895–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ գտնվող 57.95 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 111.42 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին ու աստիճանին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Ե. ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ, 30/9:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մայիսի 2023 թվականի № 1017-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 108 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 13032023-08-0047) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Մուրադյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №6088 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 90.04 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 108:**
2) 90.28 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 108/1:**
3) 36.28 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 108/2:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի № 1016Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ 119.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 270.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 04-ի №859–Ա որոշումը ու քաղաքացի Սամվել Վարդանյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 6504 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի հարևանությամբ գտնվող քաղաքացի Սամվել Վարդանյանի սեփականության իրավունքը ճանաչված 119.36 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 270.02 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, 2/3:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մայիսի 2023 թվականի № 1015-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2/6 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 12122014-08-0001) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անատոլյա Ստեփանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 6478 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 156.78 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2/6:
2) 297.81 քմ մակերեսով հողամասը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2/14:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի №1014-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 8 ՇԵՆՔ, 27 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ N 24062019-08-0033) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սիրանուշ Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №6621 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՐՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) 96.08 քմ մակերեսով շինությունը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 8 ՇԵՆՔ, 27:
2) 49.72 քմ մակերեսով շինությունը հասցեավորել՝
ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 8 ՇԵՆՔ, 27/1:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2023 թվականի N 1013-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ՖԵԼԻՔՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 24.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1(ՄԵԿ) ԴՈՒՌԸ, 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 3(ԵՐԵՔ) ԴՌՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 17.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հակոբ Ֆելիքսի Պետրոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 1-ին նրբանցք N10 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 24.86(քսանչորս ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններն, ինքնակամ բացված է 1(մեկ) դուռ, 1(մեկ) պատուհան, ինքնակամ փակված են 3(երեք) դռներ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 17.15(տասնյոթ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Հակոբ Ֆելիքսի Պետրոսյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023C8KMXL և 2023XUKFYJ ծածկագրերը, քաղաքացի Հակոբ Ֆելիքսի Պետրոսյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N22949 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Հակոբ Ֆելիքսի Պետրոսյանի (ծնված 1961 թվականի օգոստոսի 02-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 1-ին նրբանցք N10 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 17.15(տասնյոթ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:

2. Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 1-ին նրբանցք N10 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 24.86(քսանչորս ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններն, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, 1(մեկ) պատուհանը, ինքնակամ փակված 3(երեք) դռները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 13625 (տասներեք հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հակոբ Ֆելիքսի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 թվականի N 1012-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 8-ՐԴ ՇԱՐՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 34,04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 53,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 8-րդ շարքի հարեվանությամբ քաղաքացի Գուրգեն Սուրիկի Մխիթարյանի կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գուրգեն Սուրիկի Մխիթարյանը

Քաղաքացի Գուրգեն Սուրիկի Մխիթարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Սուրիկի Մխիթարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 15-ին N 21232 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Գուրգեն Սուրիկի Մխիթարյանի (ծնված 29.091953թ.), սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 8-րդ շարքի հարեվանությամբ գտնվող 53,9 (հիսուն երեք ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 34,04(երեսուն չորս ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 թվականի N 1011-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՐՎԱՆԴ ՅՈՒՐԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ ՕՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ 244/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 5 (ՀԻՆԳ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կազաչի պոստ N244/2 հասցեի տանը 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ բացված է 5 (հինգ) պատուհան:
Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանը և Երվանդ Յուրիկի Առաքելյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ ենթակետի կետի , ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մարմիններ>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավուն, հիմք ընդունելով քաղաքացի Երվանդ Յուրիկի Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 22.02.2023թ. N2685 թվագրությամբ) և կադաստրի կոմիտեում հաշվառված է 2023YLRHVP ծածկագրով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կազաչի պոստ N244/2 հասցեի տան 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ բացված 5 (հինգ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 8365 (ութ հազար երեք հարյուր վաթսունհինգ):
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 թվականի N1010-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՄԼԵՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐՏԻՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ N 3 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 93.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 93.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանին և Սվետլանա Մարտինի Կիրակոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց N 3 հասցեի տան (սեփականության վկայական N10022023-08-0007) հողամասում ինքնակամ կառուցված է 93.83 (իննսուներեք ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 93.0 (իննսուներեք ամբողջ) քառ.մ մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով (և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. 1 կետի, հիմք ընդունելով քաղաքացի Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվ մարտի 17-ին N 4542 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացիներ Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանի (ծնված՝ 18.10.1958թ.) և Սվետլանա Մարտինի Կիրակոսյանի (ծնված՝ 01.01.1595թ.) համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց N 3 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 93.0 (իննսուներեք ամբողջ) քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:

2. Քաղաքացիներ Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանին և Սվետլանա Մարտինի Կիրակոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այվազովսկու փողոց N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 93.83 (իննսուներեք ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական :
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ քաղաքացիներ Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանին և Սվետլանա Մարտինի Կիրակոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 թվականի N 1009Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 -Ի N 2343-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացի Վահրամ Հայկազի Կիրակոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 230 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 8,86 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 129,29 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին >> N 2343-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 23/01/2023 թվականի N Կ-23012023-08-0033 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացի Վահրամ Հայկազի Կիրակոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 230 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 8,86 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 129,29 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2343-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) նախաբանում <<Ռաֆայել Սերյոժայի Հովհաննիսյանի>> բառերը փոխարինել <<Վահրամ Հայկազի Կիրակոսյանի>> բառերով :

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 թվականի N 1008-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈԲԵՐՏ ԹՈՎՄԱՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 1/6 ՄԱՍ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԹՈՒՄԱՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 5/6 ՄԱՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 43 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 193,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Ռոբերտ Թովմասի Ավետիսյանին 1/6 մաս և Սամվել Թումասի Ավետիսյանին՝ 5/6 մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N 43 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 193,7 (մեկ հարյուր իննսուներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն :

Քաղաքացի Ռոբերտ Թովմասի Ավետիսյանի լիազորված անձ Մելսիդա Ռոբերտի Ավետիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Ռոբերտ և Սամվել Ավետիսյանների լիազորված անձ Մելսիդա Ռոբերտի Ավետիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 24.01.2023 N 1038 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Ռոբերտ Թովմասի Ավետիսյանին 1/6 մաս և Սամվել Թումասի Ավետիսյանին 5/6մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N 43 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 193,7 (մեկ հարյուր իննսուներեք ամբողջ յոթ տասրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ռոբերտ Թովմասի Ավետիսյանին և Սամվել Թումասի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2023 թվականի N 1007-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17 -Ի N 1174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 17-ի <<Քաղաքացիներ Կառլեն Անուշավանի Հարթենյանին (5/8 մաս) և Կիմա Անուշավանի Հարթենյանին (3/8 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցք N 60 հասցեի տան հողամասում ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 560,05 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1174-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 29/03/2023 թվականի N Կ-29032023-08-0160 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 17-ի <<Քաղաքացիներ Կառլեն Անուշավանի Հարթենյանին (5/8 մաս) և Կիմա Անուշավանի Հարթենյանին (3/8 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցք N 60 հասցեի տան հողամասում ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 560,05 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1174-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում, նախաբանում <<560,05(հինգ հարյուր վաթսուն ամբողջ հինգ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<529,74(հինգ հարյուր քսանինն ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) որոշման 2-րդ կետում <<260,05 (երկու հարյուր վաթսուն ամբողջ հինգ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<229,74 (երկու հարյուր քսանինն ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)>> թվով և բառերով.

3) որոշման 2-րդ կետում <<497735 (չորս հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր երեսունհինգ)>> թիվն ու բառերը փոխարինել <<439722 (չորս հարյուր երեսուինը հազար յոթ հարյուր քսաներկու)>> թվով և բառերով:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի N 1006-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ԲԱԲԿԵՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ N83 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 147.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 27.17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արամ Բաբկենի Մազմանյանին պատկանող Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N83 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 147.02(հարյուր քառասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 27.17(քսանյոթ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Արամ Բաբկենի Մազմանյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1 կետի և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20232GJBQX և 2023WTKRDY ծածկագրերը, քաղաքացի Արամ Բաբկենի Մազմանյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N91 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Արամ Բաբկենի Մազմանյանի (ծնված 1947 թվականի մարտի 16-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N83 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 27.17(քսանյոթ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N83 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 147.02(հարյուր քառասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արամ Բաբկենի Մազմանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 թվականի N1005 Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՐՎԱՆԴ ՅՈՒՐԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ ՕՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ 244/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 5 (հինգ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կազաչի պոստ N244/2 հասցեի տանը 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ բացված է 5 (հինգ) պատուհան:
Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանը և Երվանդ Յուրիկի Առաքելյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ ենթակետի կետի , ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մարմիններ>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավուն, հիմք ընդունելով քաղաքացի Երվանդ Յուրիկի Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 22.02.2022թ. N2685 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կազաչի պոստ N244/2 հասցեի տան 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ բացված 5 (հինգ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 8365 (ութ հազար երեք հարյուր վաթսունհինգ):
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3, Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լիանա Օնիկի Առաքելյանին և Երվանդ Յուրիկի Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի N 1009-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑ N24 ՀԱՍՑԵԻ 172.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 550.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶՆԻՎ ՎԱՐԴԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պռոշյան փողոց N24 հասցեում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, 550.1 (հինգ հարյուր հիսուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 172.79 (հարյուր յոթանասուներկու ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը ու այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանը:

Քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023X7DLY6 ծածկագիրը և քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի N 5124 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանի (ծնված 1993 թվականի ապրիլի 25-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Պռոշյան փողոց N24 հասցեի 400.0 /չորս հարյուր/ քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 172.79 (հարյուր յոթանասուներկու ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Պռոշյան փողոց N24 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 150.1 (հարյուր հիսուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանին ՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 /տասը հազար հինգ հարյուր տասնչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ 1 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1578151 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հարյուր հիսունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 150.1(հարյուր հիսուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ազնիվ Վարդանի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից :

20.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 թվականի N 1003-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԵՂԱՄ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (3/6), ՀԱՍՄԻԿ ԼԵՈՆԻԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (1/6), ՊԱՏՎԱԿԱՆ ԳԵՂԱՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (1/6), ԱՐՄԻՆԵ ԳԵՂԱՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (1/6) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N75/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 162.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (122.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Գեղամ Պատվականի Կարապետյանին (3/6), Հասմիկ Լեոնիդի Կարապետյանին (1/6), Պատվական Գեղամի Կարապետյանին (1/6), Արմինե Գեղամի Կարապետյանին (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N75/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 162.23(հարյուր վաթսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (122.2 (հարյուր քսաներկու ամբողջ երկու տասնորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Գեղամ Պատվականի Կարապետյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի , հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2021A53219 ծածկագիրը և քաղաքացի Գեղամ Պատվականի Կարապետյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023թվականին N4634 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Գեղամ Պատվականի Կարապետյանին (3/6), Հասմիկ Լեոնիդի Կարապետյանին (1/6), Պատվական Գեղամի Կարապետյանին (1/6), Արմինե Գեղամի Կարապետյանին (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N75/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 162.23(հարյուր վաթսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (122.2 (հարյուր քսաներկու ամբողջ երկու տասնորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 442077 (չորս հարյուր քառասուներկու հազար յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գեղամ Պատվականի Կարապետյանին, Հասմիկ Լեոնիդի Կարապետյանին, Պատվական Գեղամի Կարապետյանին, Արմինե Գեղամի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. գ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1002-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանի (ՀՎՀՀ՝ 57263641, գրանցման ամսաթիվը՝ 12.01.2009 թ.) 2023 թվականի ապրիլի 14-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 14-ին 6660 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանին Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան 30/1 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.04.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» ապրիլի 2023 **թվականի** N 1001-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանի (ՀՎՀՀ՝ 57263641, գրանցման ամսաթիվը՝ 12.01.2009 թ.) 2023 թվականի ապրիլի 14-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի ապրիլի 14-ին 6663 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանին Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան 30/1 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վահան Գասպարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» ապրիլի 2023 **թվական** N 1050.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԻՌԵՆԱ ՎԱՐԱԳԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ, ԱՐՏՅՈՄ ԺՈՐԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՀԱՍՄԻԿ ԱՐՏՅՈՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Իռենա Վարագի Մովսեսյանը (անձնագիր AT 0464168, տրված՝ 24.09.2019թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վարդ-բաղ 1թ/ղ 1մ/շ 6շենք, 33 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի մարտի 10-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ Բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք թիվ 33 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի փետրվարի 27-ի թիվ 351 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք 33 բնակարանը հատկացվել է Իռենա Վարագի Մովսեսյանի երեք անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն, աղջկան և տրվել թիվ 33 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի փետրվարի 27-ի թիվ 351 որոշմամբ տրված թիվ 33 միասնական օրդերը, 2023թվականի փետրվարի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230169016033, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի փետրվարի 24-ի տեղեկանքները, Իռենա Վարագի Մովսեսյանի, Արտյոմ Ժորայի Գրիգորյանի, Հասմիկ Արտյոմի Գրիգորյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի մարտի 10-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Իռենա Վարագի Մովսեսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1 թաղ. 6 շենք թիվ 33 հասցեի 63.62 (վաթսուներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1168439 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք թիվ 33 հասցեի բնակարանը 2008 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2008 թվականի փետրվարի 27-ի թիվ 351 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Վարդ բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք 33 հասցեում հաշվառված են՝ Հասմիկ Արտյոմի Գրիգորյանը 2008 թվականից, Իռենա Վարագի Մովսեսյանը 2008 թվականից, Արսեն Հմայակի Սաղաթելյանը 2014 թվականից, Անգելինա Հմայակի Գրիգորյանը 2018 թվականից, Հմայակ Գագիկի Սաղաթելյանը 2020 թվականից, Ալվինա Հմայակի Սաղաթելյանը 2020 թվականից (հիմք՝ 2023թվականի փետրվարի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230169016033, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի փետրվարի 24-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ՝ Իռենա Վարագի Մովսեսյանի, Հասմիկ Արտյոմի Գրիգորյանի, Արտյոմ Ժորայի Գրիգորյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 2023 թվականի մարտի 30-ի N ԱՏ-30032023-99-0327, 2023 թվականի մարտի 29-ի N ԱՏ-29032023-99-0486 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Իռենա Վարագի Մովսեսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ Բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք թիվ 33 հասցեի բնակարանը վարձակալել է 2008 թվականի փետրվարի 27-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1981 թվականի մարտի 27-ի թիվ 6 և 1984 թվականի մարտի 30-ի թիվ 6 որոշումներով Գյումրի քաղաքի Լենինի պողոտա (ներկայիս Տիգրան Մեծի փողոց) 24 շենքի թիվ 5 երկու սենյականոց ընդհանուր կոմունալ հարմարություններով բնակարանի մեկ սենյակը որպես ժամանակավոր, մյուս կից սենյակը որպես լրացուցիչ բնակմակերես հատկացվել է Նուշիկ Բագրատի Համբարձումյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն և 2 աղջկան:

Քաղաքացի Լուիզա Սերոբի Կիրակոսյանը մահացել է 2015 թվականի հունվարի 17-ին (հիմք՝ Ի ԿՄ-No 503709):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1981 թվականի մարտի 27-ի թիվ 6 և Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1984 թվականի մարտի 30-ի թիվ 6 որոշումներով տրված թիվ 5 միասնական օրդերները, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 8/63-1031 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2022 թվականի դեկտեմբերի 7-ի տեղեկանքը, Նուշիկ Բագրատի Համբարձումյանի անձնագրի պատճենը, 2022 թվականի դեկտեմբերի 16-ի Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 4-ի N 870-Ա հասցեավորման որոշումը, Լաուրա Սերոբի Կիրակոսյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Տիգրան Մեծի պողոտա 24 շենք թիվ 5 բնակարանի հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, հարևանների հայտարարությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հունվարի 9-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Նուշիկ Բագրատի Համբարձումյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Տիգրան Մեծի փողոց 24 շենք, թիվ 5/1 հասցեի 44.21 (քառասունչորս ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 13042023-08-0038 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Լենինի պողոտա (ներկայիս Տիգրան Մեծի փողոց) 24 շենքի թիվ 5 բնակարանը 1981 թվականի մարտի 27-ից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1981 թվականի մարտի 27-ի թիվ 6 և Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1984 թվականի մարտի 30-ի թիվ 6 որոշումներ):

գ) Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի 24 շենք թիվ 5 հասցեում հաշվառված են՝ Նուշիկ Բագրատի Համբարձումյանը 1981 թվականից, Լաուրա Սերոբի Կիրակոսյանը 1990 թվականից, նշված հասցեում հաշվառված են նաև թվով 17 այլ անձինք, որոնք կապ չունեն նշված բնակարանի հետ, բնակվում են այլ համարակալում ունեցող բնակարանում, որը գտնվում է երկրորդ մուտքի առաջին հարկում (հիմք՝ Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 8/62-1904 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2022 թվականի դեկտեմբերի 7-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Նուշիկ Բագրատի Համբարձումյանի, Լաուրա Սերոբի Կիրակոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ,1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 2023 թվականի հունվարի 9-ի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ N ԱՏ-09012023-99-0094, 2023 թվականի մարտի 9-ի N ԱՏ-09032023-99-0092 տեղեկանքներ):

զ) Գյումրու Տիգրան Մեծի փողոց 24 շենքի 5 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2022 թվականի դեկտեմբերի 16-ի եզրակացություն) :

է)Գյումրի համայնքի Տիգրան Մեծի փողոց 24 շենք, 5 հասցեագրությամբ հաշվառված 44.21 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ տրամադրվել է հասցե՝ Գյումրի ք. Տիգրան Մեծի փողոց, 24 շենք, 5/1 (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 4-ի N 870-Ա հասցեավորման որոշում):

ը) Քաղաքացի Նուշիկ Բագրատի Համբարձումյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց 24 շենքի 5 հասցեի բնակարանը վարձակալել է 1981 թվականի մարտի 27-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի

26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝

նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Նուշիկ Բագրատի Համբարձումյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Տիգրան Մեծի փողոց 24 շենք, թիվ 5/1 հասցեի 44.21 (քառասունչորս ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Նուշիկ Բագրատի Համբարձումյանին ծնված՝ 1951թվականին,
   2) Լաուրա Սերոբի Կիրակոսյանին ծնված՝ 1973 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ Նուշիկ Բագրատի Համբարձումյանի, Լաուրա Սերոբի Կիրակոսյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Նուշիկ Բագրատի Համբարձումյանին, Լաուրա Սերոբի Կիրակոսյանին:
4. Քաղաքացիներ Նուշիկ Բագրատի Համբարձումյանին, Լաուրա Սերոբի Կիրակոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Նուշիկ Բագրատի Համբարձումյանին, Լաուրա Սերոբի Կիրակոսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

25.04.2023

x

2023թիվ Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2023 **թվական** N 1096-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի № 226-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Աիդա Հայկազի Հակոբյանը Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 2010 թվականի փետրվարի 2-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 226-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Հաշվի առնելով քաղաքացի Էմմա Զոհրաբ Հակոբյանի մահվան հանգամանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Հայկազի Հակոբյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2023 թվականի մարտի 21-ի թիվ 4773 թվագրությամբ դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթի արձանագրությունը, քաղաքացի Էմմա Զոհրաբ Հակոբյանի ԲԱ 052173 մահվան վկայականը

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Գյումրիի քաղաքապետի 2010 թվականի փետրվարի 2-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 226-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հանել որոշման 1-ին կետի «1. Հակոբյան Էմմա Զոհրաբի 1941 թ.» բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Հայկազի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից :

25.04.2023

X

2023թիվ Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» ապրիլի 2023 թվական N 1093-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՄԱՐՏԻՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանը (անձնագիր՝ AR 0505140 տրված՝ 15.11.2017թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Երևանյան խճուղի 119 շենք 8 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի ապրիլի 5-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Երևանյան խճուղի 119 շենք թիվ 8 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2005 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1944 որոշմամբ Երևանյան խճուղի 119 շենքի թիվ 8 բնակարանը հատկացվել է քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանին:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2005 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1944 որոշմամբ տրված թիվ 8 միասնական օրդերը, 2023 թվականի մարտի 28-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյա թիվ 230646064082, 2023 թվականի մարտի 28-ի «Երևանյան 157ա» համատիրության տեղեկանքները, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 27-ի եզրակացությունը, Անահիտ Մարտինի Ղազարյանի անձնագրի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի ապրիլի 5-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Գյումրի Երևանյան խճուղի 119 շենք թիվ 8 հասցեի 29.28 (քսանիննը ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1145229 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 119 շենքի թիվ 8 բնակարանը 2005 թվականի սեպտեմբերի 27-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1944 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Երևանյան խճուղի 119 շենքի թիվ 8 հասցեում հաշվառված բնակվում են՝ Անահիտ Մարտինի Ղազարյանը 2006թվականից, Միեր Անդրանիկի Հարությունյանը 2020 թվականից, (հիմք՝ 2023 թվականի մարտի 28-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյա թիվ 230646064082 և 2023 թվականի մարտի 28-ի «Երևանյան 157ա» համատիրության տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Անահիտ Մարտինի Ղազարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, նրանց կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ(հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 30-ի N ԱՏ-30032023-99-0243 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 119 բազմաբնակարան շենք և թիվ 8 բնակարանի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, մաշվածությունը՝ 20 տոկոս (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 27-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանի ընտանիքը Գյումրու Երևանյան խճուղի 119 շենքի թիվ 8 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականի սեպտեմբերի 27-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական

համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի Երևանյան խճուղի 119 շենք թիվ 8 հասցեի 29.28 (քսանիննը ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Անահիտ Մարտինի Ղազարյանին ծնված՝ 1963 թվականին
որպես սեփականություն :

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանի նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանին :
4. Քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Մարտինի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

25.04.2023

2023թիվ Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» ապրիլի 2023 թվական N 1092 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՊԵՐՃՈՆԻԿԻ ՍԵՖԵՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արթուր Գևորգի Սեֆերյանը (անձնագիր՝ AP 0433620, տրված՝ 29.05.2015թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Գոգոլի փողոց 14 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի ապրիլի 5-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Խր.Հայրիկ փողոց 10ա շենք թիվ 38 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1984 թվականի հուլիսի 31-ի թիվ 14 որոշմամբ Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի (ներկայիս Խր.Հայրիկ փողոց)10ա շենքի թիվ 38 բնակարանը հատկացվել է Օսաննա Սարգսի Սեֆերյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն , աղջկան, տղային:

Քաղաքացի Օսաննա Սարգիս Բոսնոյանը (Սեֆերյանը) մահացել է 2009 թվականի սեպտեմբերի 17-ին (հիմք՝ ԱԲ 005907 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1984 թվականի հուլիսի 31-ի թիվ 14 որոշմամբ տրված թիվ 38 միասնական օրդերը, 2023 թվականի մարտի 14-ի բնակչության պետական ռեգիստրում՝ հաշվառման վերաբերյալ N 230641064044 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023թվականի մարտի 23-ի տեղեկանքը, Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի, Անժելա Պերճոնիկի Ղուկասյանի անձնագրերի պատճենները, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 20-ի եզրակացությունը, Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Խր.Հայրիկ փողոց 10ա շենք թիվ 38 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ

հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի ապրիլի 5-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի լիազորված անձ՝ Արթուր Գևորգի Սեֆերյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկ փողոց 10ա շենք, թիվ 38 հասցեի 43.05 (քառասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 13042023-08-0036 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի (ներկայիս Խր.Հայրիկ փողոց)10ա շենքի թիվ 38 բնակարանը 1984 թվականի հուլիսի 31-ից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղաքային սովետի գործկոմի 1984 թվականի հուլիսի 31-ի թիվ 14 որոշմամբ տրված թիվ 38 միասնական օրդեր):

գ) Շիրակ Գյումրի Խր.Հայրիկ խճ. 10ա շենք 38 հասցեում հաշվառված բնակվում է՝ Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանը 1993 թվականից (հիմք՝ 2023 թվականի մարտի 14-ի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալN 230641064044 տեղեկանք, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023թվականի մարտի 23-ի տեղեկանք:

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական կատարված չէ: Անժելա Պերճոնիկի Ղուկասյանի անվամբ Շիրակի մարզ,համայնք Գյումրի ք. Մ.Խորենացի փողոց 4 շենք, 62 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ,համայնք Գյումրի ք. Մ.Խորենացի փողոց 4 շենք, 62 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 16-ի -ի N ԱՏ-16032023-99-0225, N ԱՏ-16032023-99-0339 տեղեկանքներ:

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի Խրիմյան Հայրիկ փողոց 10ա շենքի թիվ 38 բնակարանի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է առաջին-երկրորդ աստիճանի, մաշվածությունը՝ 10 տոկոս (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 20-ի եզրակացություն)

զ) Քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի ընտանիքը ընտանիքը Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ փողոց 10ա շենք թիվ 38 հասցեի բնակարանը վարձակալել է 1984 թվականի հուլիսի 31-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Անժելա Պերճոնիկի Ղուկասյանի անվամբ Շիրակի մարզ,համայնք Գյումրի ք. Մ.Խորենացի փողոց 4 շենք, 62 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ,համայնք Գյումրի ք. Մ.Խորենացի փողոց 4 շենք, 62 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական կատարված չէ :

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի լիազորված անձ՝ Արթուր Գևորգի Սեֆերյանի դիմումը բավարարեց մասամբ:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկ փողոց 10ա շենք, թիվ 38 հասցեի 43.05 (քառասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանին ծնված՝ 1975 թվականին
   որպես սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանին :
4. Քաղաքացի Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գևորգ Պերճոնիկի Սեֆերյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչականկամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

25.04.2023

X

2023թիվ Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2023 **թվական** N 1041-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ՌՈՒԶԱՆՆԱ ՖՐՈՒՆԶԵԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ, ԶԻՆԱԻԴԱ ՆԻԿԻՖՈՐՈՎՆԱ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՂՈՍԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ՓԱՌԱՆՁԵՄ ՖՐՈՒՆԶԵԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ԷԴԳԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ,ՊԱՎԵԼ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԹԻԼԲՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հարություն Պողոսի Թիլբյանը (անձնագիր AN 0680416, տրված՝ 14.10.2013թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Խր.Հայրիկի փ. 31 շենք, 16 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի փետրվարի 27-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Խր.Հայրիկ 31ա շենք թիվ 16 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 6-ի թիվ 31 որոշմամբ Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ 31 շենք թիվ 16 բնակարանը հատկացվել է Պողոս Դիլբյանի տասներկու անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 քրոջը, 2 տղային, 2 հարսին և 4 թոռանը:

Քաղաքացիներ Պողոս Հարություն Թիլբյանը, Լուսի Հարություն Թիլբյանը, Զվարթ Հարություն Թիլբյանը մահացել են (հիմք՝ ԲԱ 365993, ԱԱ 081345, ԱԲ 258751 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 6-ի թիվ 31 որոշմամբ տրված թիվ 16 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2023 թվականի հունվարի 27-ի 230646064029 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի փետրվարի 1-ի տեղեկանքը, Հարություն Պողոսի Թիլբյանի, Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանի, Աննա Հարությունի Թիլբյանի, Կարեն Հարությունի Թիլբյանի, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանի անձնագրերի պատճենները, Ալեքսանդր Պողոսի Թիլբյանի, Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանի, Էդգար Ալեքսանդրի Թիլբյանի,

Պավել Ալեքսանդրի Թիլբյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Խր.Հայրիկ փողոց, 31 շենք, 16 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի փետրվարի 27-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Հարություն Պողոսի Թիլբյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 31ա շենք, 16 հասցեի 70.97 (յոթանասուն ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 04042023-08-0047 վկայական):

բ) Գյումրի ք. Խրիմյան Հայրիկ փողոց, 31 շենք 16 հասցեագրությամբ բնակարանը վերահասցեավորվել է՝ Խրիմյան Հայրիկ փողոց, 31Ա շենք 16 (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 29-ի 776-Ա որոշում):

գ) Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանը 2002 թվականի փետրվարի 6-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 6-ի թիվ 31 որոշում) :

դ) Շիրակ Գյումրի Խրիմյան Հայրիկ փողոց 31 շենք թիվ 16 հասցեում հաշվառված են քաղաքացիներ՝ Հարություն Պողոսի Թիլբյանը 2003 թվականից, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանը 2003 թվականից, Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանը 2003 թվականից, Աննա Հարությունի Թիլբյանը 2010 թվականից, Կարեն Հարությունի Թիլբյանը 2018 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2023 թվականի հունվարի 27-ի 230646064029 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի փետրվարի 1-ի տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ՝ Հարություն Պողոսի Թիլբյանի, Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանի, Աննա Հարությունի Թիլբյանի, Կարեն Հարությունի Թիլբյանի, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանի, Ալեքսանդր Պողոսի Թիլբյանի, Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանի,Էդգար Ալեքսանդրի Թիլբյանի,Պավել Ալեքսանդրի Թիլբյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 16-ի N ԱՏ-16022023-99-0023, N ԱՏ-16022023-99-0037, N ԱՏ-16022023-99-0126, N- ԱՏ-16022023-99-0323, N-ԱՏ-16022023-99-0486, N- ԱՏ-23022023-99-0183 տեղեկանքներ):

զ) Քաղաքացի Հարություն Պողոսի Թիլբյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանը վարձակալել է 2002 թվականի փետրվարի 6-ից այսինքն՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամհամայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է

Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Հարություն Պողոսի Թիլբյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 31ա շենք, 16 հասցեի 70.97 (յոթանասուն ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Հարություն Պողոսի Թիլբյանին	ծնված 1967 թվականին,
2) Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանին	ծնված 1973 թվականին,
3) Աննա Հարությունի Թիլբյանին	ծնված 1994 թվականին,
4) Կարեն Հարությունի Թիլբյանին	ծնված 1998 թվականին,
5) Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանին	ծնված 1945 թվականին,
6) Ալեքսանդր Պողոսի Թիլբյանին	ծնված 1969 թվականին,
7) Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանին	ծնված 1976 թվականին,
8) Էդգար Ալեքսանդրի Թիլբյանին	ծնված 1998 թվականին,
9) Պավել Ալեքսանդրի Թիլբյանին	ծնված 1994 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ Հարություն Պողոսի Թիլբյանի, Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանի, Աննա Հարությունի Թիլբյանի, Կարեն Հարությունի Թիլբյանի,Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանի, Ալեքսանդր Պողոսի Թիլբյանի, Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանի, Էդգար Ալեքսանդրի Թիլբյանի, Պավել Ալեքսանդրի Թիլբյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Հարություն Պողոսի Թիլբյանին,Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանին,Աննա Հարությունի Թիլբյանին,Կարեն Հարությունի Թիլբյանին, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանին,Ալեքսանդր Պողոսի Թիլբյանին,Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանին,Էդգար Ալեքսանդրի Թիլբյանին,Պավել Ալեքսանդրի Թիլբյանին:
4. Քաղաքացիներ՝ Հարություն Պողոսի Թիլբյանին,Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանին,Աննա Հարությունի Թիլբյանին, Կարեն Հարությունի Թիլբյանին, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանին, Ալեքսանդր Պողոսի Թիլբյանին, Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանին, Էդգար Ալեքսանդրի Թիլբյանին, Պավել Ալեքսանդրի Թիլբյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Հարություն Պողոսի Թիլբյանին,Ռուզաննա Ֆրունզեի Թիլբյանին,Աննա Հարությունի Թիլբյանին,Կարեն Հարությունի Թիլբյանին, Զինաիդա Նիկիֆորովնա Թիլբյանին, Ալեքսանդր Պողոսի Թիլբյանին, Փառանձեմ Ֆրունզեի Թիլբյանին, Էդգար Ալեքսանդրի Թիլբյանին, Պավել Ալեքսանդրի Թիլբյանին պատշաճ

կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թիվ Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբեր 2023 թվականի N 1073 Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՏՐՎԱԾ N94/20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գևորգ Վոլոդյայի և Վարդուհի Լեոնիկի Պասկևիչյաններին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի №141/4, №53/2 և №53/15 հասցեներում առևտրի սրահի ընդլայնման համար 2020 թվականի սեպտեմբերի 22-ին տրվել է N94/20 շինարարության թույլտվությունը:

Շինարարական աշխատանքները ավարտվել են սահմանված ժամկետում:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2020 թվականի սեպտեմբերի 22-ին տրված N94/20 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

2023թ. ք.Գյումրի Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

Փոխառաջնորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2023 թվականի № 1072-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑ, 2 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԽԱՆՈՒԹԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 0109670) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ՎԵՆԵՐԱ» ՍՊԸ-ի տնօրեն Մերի Աթոյանի (Զվակերյան) դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №7105 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Կիրովի փողոց, 2 հասցեագրությամբ խանութը (վկայական № 0109670) վերահասցեավորել՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ, 2 ՇԵՆՔ, 3/1:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» ապրիլի 2023 թվականի N 1071-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՌՈՒԴԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնեական լիազորությունները ժամանակավորապես իրականացնող Արթուր Ռուդիկի Պապիկյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 1 (մեկ) աշխատանքային օր՝ 2023 թվականի ապրիլի 28-ը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքային օրվա ընթացքում Արթուր Ռուդիկի Պապիկյանի պաշտոնեական պարտականությունների կատարումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Հրաչի Մկրտչյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Հրաչի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.04.2023

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
